



Ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները (Հոդված 65)

- Պահանջեք ընտրողից ներկայացնել.
 - ✓ Վրաստանի քաղաքացու Անձնական վկայական/ID քարտ կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիրը
 - ✓ Բռնի տեղաշարժված անձի դեպքում՝ տարհանվածի վկայականը՝ Անձնական վկայականի/ID քարտի կամ Անձնագրի հետ միասին
 - ✓ Համընդհանուր ընտրացուցակում գրանցված Եվրամիության անդամ պետության քաղաքացին՝ Եվրամիության անդամ պետության Անձնագիրը
- Ստուգեք՝ ընտրողը մտցված է, թե ոչ հանընդհանուր ընտրացուցակում կամ հատուկ ցուցակում և համեմատեք ընտրողի անձնական համարը ընտրացուցակում գոյություն ունեցող համարի հետ
- Եթե ընտրողը մտցված է ընտրացուցակի մեջ, կատարեք ընտրողի դրոշմակնքում
- Համընդհանուր ընտրացուցակում ձեր ստորագրությամբ հաստատեք ընտրական քվեաթերթիկ(ներ) տալը
- Խնդրեք ընտրողին, Համընդհանուր ընտրացուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հաստատել ընտրական քվեաթերթիկներ ստանալը
- Ստորագրեք ընտրական քվեաթերթիկ(ներ)ի հակառակ կողմում
- Վավերացրեք ընտրական քվեաթերթիկ(ներ)ը (հակառակ կողմում, դրան համար հատկացված տեղում) գրանցողի կնիքով
- Փոխանցեք ընտրողին ձեր կողմից ստորագրված և գրանցողի կնիքով վկայագրված ընտրական քվեաթերթիկ(ներ)ը
- Մատնացույց արեք ընտրողին, մտնել գաղտնի քվեախցիկ

Ուշադրություն!

- Եթե ընտրողը չի ներկայացնում Վրաստանի քաղաքացու Անձնական վկայական/ID Քարտ, Վրաստանի քաղաքացու Անձնագիր, Բռնի տեղաշարժված անձի դեպքում՝ Տարհանվածի վկայական Վրաստանի քաղաքացու Անձնական վկայականի/ID քարտի կամ Անձնագրի հետ միասին, իսկ Եվրամիության անդամ պետության քաղաքացին՝ Եվրամիության անդամ պետության Անձնագիրը, նրան չպետք է փոխանցվի ընտրական քվեաթերթիկ(ներ)
- Եթե ընտրողը հրաժարվում է դրոշմակնքումից, նա իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը և չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ(ներ)
- Ընտրողը, որը վերին վերջավորությունները չունենալու պատճառով չի կարողանում ձայն տալու ընթացակարգերը անկախորեն կատարել (ֆիզիկական վիճակ), չի անցնում դրոշմակնքման ընթացակարգը և նրան ընտրական քվեաթերթիկ(ներ) տալիս, Համընդհանուր ընտրացուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է կատարեք գրություն «Ֆիզիկական վիճակ» և հաստատեք անձնական ստորագրությամբ
- Եթե դուք կամ ընտրողը վնասեցիք ընտրական քվեաթերթիկը, այդ մասին անհապաղ տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցեք նոր (ձեր կողմից ստորագրված և գրանցողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ
- Եթե Համընդհանուր ընտրացուցակում ընտրողի տվյալները չեն գտնվում, ցուցմունք տվեք ընտրողին դիմել վերջին գրանցողին նրա տվյալները վերստուգելու համար (նշված գրանցողը ընտրողի տվյալները ստուգում է Համընդհանուր ընտրացուցակում այբբենական կարգով դասավորված ցուցակներից հետո մտցված ընտրողների ցուցակում, «Հաշվառման հասցեից հանված է» գրությամբ (այդպիսինի գոյության դեպքում)
- Եթե ընտրական տեղամաս ներկայացավ ընտրող, որին համընդհանուր ցուցակում տրվել է «Գտնվում է արտասահմանում» կարգավիճակը, նշված ընտրողը քվեարկությանը մասնակցում է ընդհանուր կարգով (Ընտրական Օրենսգիրք Հոդված 65, 184,9¹)

Ի նկատի ունեցեք!

- ✓ Խորհուրդ է տրվում գրանցողը 10:00, 12:00, 15:00, 17:00 և 19:00 ժամերին, առանց խոչընդոտելու քվեարկության գործընթացը, վերահաշվի ցուցակներում ընտրողների ստորագրությունները և իր կողմից տրված քվեաթերթիկների թվաքանակը (նախագահին փոխանցած վնասված քվեաթերթիկների հաշվառումով): Եթե տվյալների միջև բացահայտվում է տարբերություն, գրանցողը անհապաղ պետք է գրի բացատրագիր, որը կցվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններին:
- ✓ Գրանցողի գործառույթը փոխանցելու դեպքում, գրանցողը պարտավոր է վերահաշվել ցուցակներում ընտրողների ստորագրությունները և իր կողմից փոխանցված վնասված քվեաթերթիկների թվաքանակը (նախագահին փոխանցած վնասված քվեաթերթիկների հաշվառումով) և արդյունքների մասին տեղեկացնի նախագահին: Եթե տվյալների շրջանում տարբերություն բացահայտվի, գրանցողը անհապաղ պետք է գրի բացատրագիր, որը կցվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններին: